საარჩევნო სისტემების
განვითარების, რეფორმებისა და
სწავლების ცენტრი

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց հավաստագրման քննական թեստեր

Պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնի կողմից

Հաստատվել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 17-ի N22/2026 կարգադրությամբ

Տարբերակ 02

2026 թվական

Ընդհանուր տեղեկություններ

Համաձայն «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների, հավաստագրման քննության թեստերը ներառում են միայն «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) և Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի N3/2012 որոշումով հաստատված տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգից:

Պատրաստվել է 145 թեստ (նրա նախատեսմամբ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգում տրված կարգավորումները հիմնականում համընկնում են Ընտրական օրենսգրքի կարգավորումների հետ, թեստերի հիմքում ներառված են միայն Ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածները): Բացառություն է կազմում № 19 թեստը, որպես որի հիմք նշված է տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը, քանի որ կարգավորումը ճշգրտված է վերոնշյալ ենթաօրենսդրական ակտով):

Բովանդակություն

Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգավիճակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համալրման կանոնները 3

Գլուխ II. Նախընտրական քարոզարշավի/քարոզչության հետ կապված սահմանափակումները 4

Գլուխ III. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի լիազորությունները 5

Գլուխ IV. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը 6

Գլուխ V. Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտերը 6

Գլուխ VI. Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները՝ կապված ընտրողների ցուցակների հետ 7

Գլուխ VII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունը 8

Գլուխ VIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները քվեարկության շենքի կազմակերպման և քվեարկության օրվա նախապատրաստման գործընթացում 10

Գլուխ IX. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը քվեարկության օրը 10

Գլուխ X. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը 24

Գլուխ XI. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք և նրանց լիազորությունները 27

Գլուխ XII. Քվեարկության օրը կարգուկանոնի պահպանումը քվեարկության շենքում և դրան հարակից տարածքում 29

Գլուխ XIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավասությունը քվեարկության օրը դիմումների/բողոքների քննարկման վերաբերյալ 30

Գլուխ XIV. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի/ղեկավարի պատասխանատվության միջոցառումները 31

Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգավիճակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համալրման կանոնները

1. Ստորև թվարկված դատողություններից ո՞րն է ճիշտ.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որը ստեղծվում է ԿԸՀ-ի և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված/ընտրված անձանց կողմից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որը ստեղծվում է Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտներից, ԿԸՀ-ի և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված/ընտրված անձանցից: (26.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որը ստեղծվում է միայն ԿԸՀ-ի կողմից նշանակված անձանցից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որը ստեղծվում է միայն վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված անձանցից:

2. Քանի՞ անդամից է բաղկացած տեղամասային ընտրական հանձնաժողովը:

- Ոչ ավելի, քան 17 անդամից: (26.2)
- Ոչ ավելի, քան 13 անդամից:
- Ոչ ավելի, քան 14 անդամից:
- Ոչ ավելի, քան 12 անդամից:

3. Տեղամասային ընտրական հանձնաժողովի.

- 8 անդամի ընտրում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, իսկ 9 անդամի նշանակում են անդամ նշանակելու իրավունք ունեցող կուսակցությունները: (26.5.6)
- 9 անդամի ընտրում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, իսկ 8 անդամի նշանակում են անդամ նշանակելու իրավունք ունեցող կուսակցությունները:
- 17 անդամի ընտրում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- 17 անդամի նշանակում են անդամ նշանակելու իրավունք ունեցող կուսակցությունները:

4. Ո՞ր դատողությունն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (26.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին իսկ նիստին ընտրում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց նշանակում է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց նշանակում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

5. Ո՞ր դատողությունն է ճիշտ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հավաստագիր չի պահանջվում.

- Այն անձից, որն ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:
- Այն անձից, որն ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի հավաստագիր:

- Իրավասու կուսակցության կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամից:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (26.8)

6. Ո՞ր դատողությունն է ճիշտ:

Մրցույթին մասնակցող անձից տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի հավաստագիր չի պահանջվում այն դեպքում, եթե

- Ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր: (26.8)
- Ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հավաստագիր:
- Ունի հանրային պաշտոնյայի հավաստագիր:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

7. Ո՞ր դատողություն է ճիշտ.

- Արգելվում է մինչև քվեարկության օրը, վերջին 25 օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչը:
- Արգելվում է մինչև քվեարկության օրը, վերջին 35 օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչը:
- Արգելվում է մինչև քվեարկության օրը, վերջին 30 օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչը:
- Արգելվում է մինչև քվեարկության օրը, վերջին 20 օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչը: (13.12)

8. Ե՞րբ է սկսում գործել նորաստեղծ տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- Ընտրություններից 30 օր առաջ: (26.15)
- Ընտրություններից 35 օր առաջ:
- Ընտրություններից 40 օր առաջ:
- Ընտրություններից 34 օր առաջ:

9. Ե՞րբ են դադարում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները.

- Հանձնաժողովի ստեղծումից հետո ոչ ուշ, քան 25-րդ օրը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելուն պես: (26.15)
- Հանձնաժողովի ստեղծումից հետո ոչ ուշ, քան 30-րդ օրը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելուն պես:

Գլուխ II. Նախընտրական քարոզարշավի/քարոզչության հետ կապված սահմանափակումները

10. Արդյոք ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցի՞չն է:

- Այո, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է:
- Ոչ, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ: (8.20)
- Այո, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է և կատարում է նրա անմիջական առաջադրանքները:

- Ոչ, ընտրական հանձնաժողովի անդամը իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ, բացառությամբ կուսակցության կողմից ընտրված անդամների։

11. Ո՞ր դատողությունն է ճիշտ.
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզչությանը մասնակցելու իրավունք չունի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը։ (50.4.ա)
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզչությանը մասնակցելու իրավունք ունեն կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները։
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզչությանը մասնակցելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզչությանը մասնակցելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։

Գլուխ III. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի լիազորությունները

12. Տեղամասային ընտրական հանձնաժողովի հրապարակային տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձն է.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։ (30.3.բ)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ։

13. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անվամբ ստացված գրագրությունը ընդունում նբաշխում է.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (30.1.գ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։

14. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում կամ նախագահի հանձնարարությամբ նրա պարտականությունը կատարում է.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։ (8.23)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ամենատարեց անդամը։

15. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությանը չի պատկանում.
- Լրիվ վարչական գործառույթների իրականացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում։ (30.1.ա)
- Հանձնաժողովի կարգադրությունների նախագծերի պատրաստումը։
- Հանրային տեղեկատվության տրամադրումը։
- Քվեարկության օրվա գործավարության մատյանի վարումը։

16. Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկների պահման և ըստ նշանակության բաշխման համար պատասխանատու են անձամբ.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և տնտեսական ծառայության ղեկավարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: (69.6)

Գլուխ IV. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը

17. Բացառությամբ Ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերի, մինչև ո՞ր ժամն է տեղամասային ընտրական հանձնաժողովը ստանում, տրամադրում և գրանցում ընտրական փաստաթղթերը:

- Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:30-ը:
- Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:15-ը:
- Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:45-ը:
- Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:00-ն: (8.12)

18. Դիմումատուն տեղամասային ընտրական հանձնաժողովից որևէ փաստաթղթի ստացումը հաստատում է.

- Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրելով:
- Գործավարության մատյանի վրա ստորագրելով:
- Գրանցամատյանում ստորագրելով: (8.14)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

19. Ո՞վ է տեղամասային ընտրական հանձնաժողովում ստանում, տրամադրում և գրանցում-հաշվառում ընտրական փաստաթղթերը, դիմումները, բողոքները (բացառությամբ քվեարկության օրվա):

- Հանձնաժողովի քարտուղարը, կամ հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: (Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ 11.1)
- Հանձնաժողովի նախագահի տեղակալը, կամ հանձնաժողովի նախագահի տեղակալի բացակայության դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:
- Հանձնաժողովի քարտուղարը, կամ երբ քարտուղարի կողմից անհնար է իրականացնել իր լիազորությունը, գործառույթն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Հանձնաժողովի նախագահը, քանի որ միայն նախագահն է պատասխանատու տեղամասային ընտրական հանձնաժողովում ընտրական փաստաթղթերի, դիմումների, բողոքների ստացման, տրամադրման և դրանց գրանցման-հաշվառման համար:

Գլուխ V. Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտերը

20. Ստորև թվարկվածներից ո՞ւմ իրավասության մեջ է ներառված տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունների նախագծերի պատրաստումը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի օգնականի։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի։ (30.3.ա)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի։

21. Թվարկվածներից ո՞րն է պատկանում տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավականակտի։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը։
- Բոլոր պատասխանները ճիշտ են։ (10.1.գ)

22. Ե՞րբ և որտե՞ղ պետք է տեղադրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի և նրա նախագահի ցանկացած որոշում։
- Հենց հաջորդ օրը տեղադրվում է ընտրական տեղամասում։ (29.2)
- Չի տեղադրվում ընտրական տեղամասում։
- Երրորդ օրը տեղադրվում է շրջանային ընտրական հանձնաժողովի շենքում։
- Երկրորդ օրը հրապարակվում է տեղական զանգվածային լրատվության միջոցներով։

Գլուխ VI. Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները՝ կապված ընտրողների ցուցակների հետ

23. Ո՞վ է կրում պատասխանատվությունն այն դեպքում, երբ ընտրացուցակները և դրանց հետ կապված բողոք ներկայացնելու օրենքով սահմանված կարգը փակցված չեն տեղամասային ընտրական հանձնաժողովի և քվեարկության շենքում։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (38.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- ԿԸՀ-ն։

24. Ինչպե՞ս պետք է վարվի ընտրողը, եթե քվեարկության օրը չի կարող գնալ քվեարկության շենք։
- Քվեարկության օրվան նախորդող օրը մինչև ժամը 18.00-ն պետք է դիմի ԿԸՀ՝ շրջիկ քվեատուփով քվեարկելու պահանջով։
- Քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ պետք է դիմի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ շրջիկ քվեատուփով քվեարկելու պահանջով։
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 11 օր առաջ պետք է դիմի տեղամասային ընտրական հանձնաժողով՝ շրջիկ քվեատուփով քվեարկելու պահանջով։ (37.2)
- Քվեարկության օրվան նախորդող օրը մինչև ժամը 18.00-ն պետք է դիմի տեղամասային ընտրական հանձնաժողով՝ շրջիկ քվեատուփով քվեարկելու պահանջով։

25. Ո՞ր դատողությունն է ճիշտ։ Այն ընտրողների թիվը, որոնք առողջական վիճակի պատճառով չեն կարող գնալ քվեարկության շենք, չպետք է գերազանցի ընտրատեղամասում ընտրողների միասնական ցուցակում ընդգրկված ընտրողների 3 տոկոսը։ Նշված քանակը լրանալուց հետո

ընտրողներին շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ ընդգրկելու նպատակահարմարության մասին որոշումը կայացնում է

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը։ (37.4)
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը։
- Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը։
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։

26. Թվարկվածներից ո՞ր դեպքում են ընտրողին ընդգրկում շրջիկ քվեատուփի ցուցակում.

- Ընտրողը գտնվում է արտերկրում։
- Ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է։
- Ընտրողը գտնվում է կալանքի տակ։ (37.1.բ)
- Ընտրողը ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է։

27. Թվարկվածներից ո՞ր դեպքում է ընտրողը ընդգրկվում շարժական քվեատուփի ցուցակում։

- Եթե ընտրողը ներքին տեղահանված անձ է։
- Եթե ընտրողը ծառայություն է անցնում Վրաստանի պետական սահմանի վրա տեղակայված զինվորական զորամասում կամ Վրաստանի ներքին գործերի նախարարության պետական ենթագերատեսչային հաստատության՝ Վրաստանի սահմանային ոստիկանության այն ստորաբաժանումում, որը գտնվում է ընտրատեղամասից հեռու։ (37.1.ե.ա)
- Եթե ընտրողը Վրաստանի ընտրական վարչության պաշտոնյա է։
- Եթե ընտրողը տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնյա է։

28. Որտե՞ղ է նշվում ընտրողի տեղափոխումը շրջիկ քվեատուփերի ցուցակ և ո՞ւմ կողմից պետք է դա հաստատվի։

- Ընտրողների միասնական ցուցակում, որը հաստատվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ստորագրություններով։
- Ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում, որը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով։ (37.2. բ)
- Ընտրողների հատուկ ցուցակում, որը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ստորագրություններով։
- Ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում, որը հաստատվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով։

Գլուխ VII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունը

29. Ո՞ր պնդումն է ճիշտ։

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունն անցկացվում է քվեարկության օրը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունն անցկացվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ։ (66.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունն անցկացվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 9 օր առաջ։

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությունն անցկացվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 11 օր առաջ:

30. Թվարկվածներից ո՞վ չի մասնակցում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հանձնաժողովի անդամների գործառույթները բաշխելու համար անցկացվող վիճակահանությանը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (66.2)

31. Ո՞ր պատասխանն է սխալ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշում է.
- Հատուկ ծրարը հանձնաժողովի կնիքով վավերացնող հանձնաժողովի անդամին: (66.4)
- Քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին:
- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին:
- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին:

32. Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ որոշելու համար վիճակահանությանը մասնակցում են հետևյալ անձինք.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված անդամները: (66.6)
- Քաղաքական կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

33. Ինչպե՞ս է որոշվում շարժական քվեատուփը տեղափոխող հանձնաժողովի անդամների ով լինելը:
- Շարժական քվեատուփը տեղափոխող հանձնաժողովի անդամների ով լինելը որոշվում է վիճակահանությամբ: (66.4.ա)
- Շարժական քվեատուփը տեղափոխող հանձնաժողովի անդամների ով լինելը որոշվում է ընտրական հանձնաժողովի անդամների միջև անվանական քվեարկությամբ:
- Շարժական քվեատուփը տեղափոխող հանձնաժողովի անդամների ով լինելը որոշվում է իրենց ցանկությամբ:
- Շարժական քվեատուփը տեղափոխող հանձնաժողովի անդամներ են որոշվում տարիքով ամենաավագ հանձնաժողովի անդամները:

34. Վիճակահանության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը կազմեց ակտ, որում ընդգրկեց վիճակահանության արդյունքները: Արդյոք հանձնաժողովի նախագահը ճի՞շտ վարվեց:
- Այո՛, վիճակահանության արդյունքների ակտը կազմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ո՛չ, վիճակահանության արդյունքների ակտը կազմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Ո՛չ, վիճակահանության արդյունքների ակտը կազմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (66.8)
- Ո՛չ, վիճակահանության արդյունքների ակտը կազմում է հանձնաժողովի այն անդամը, որին վիճակահանության արդյունքներով հանձնարարվել է կազմել ակտը:

Գլուխ VIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները քվեարկության շենքի կազմակերպման և քվեարկության օրվա նախապատրաստման գործընթացում

35. Տրված դատողություններից ո՞րն է ոչ ճիշտ.
- Յուրաքանչյուր 300 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն 1 քվեարկության տեղ։ (63.1.ա)
- Յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն 1 քվեարկության տեղ։
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է տեղադրված լինի թափանցիկ քվեատուփ։
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցվի ԿԸՀ-ի կողմից սահմանված ընտրական քվեաթերթիկը լրացնելու կարգը։

36. Եթե քվեաթերթիկում ընդգրկված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, ապա այդ մասին հայտարարությունը
- Պետք է տարածվի միայն հեռուստատեսային տարածքում։
- Այն պետք է փակցվի տեսանելի տեղում միայն քվեախցիկում։
- Այն պետք է փակցվի տեսանելի տեղում քվեարկության շենքում և գաղտնի քվեարկության խցիկներում։ (63.2)
- Այն պետք է փակցվի համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված տեղում։

37. Ինչպիսի՞ն է ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հանձնելու կարգը։
- Փոխանցում է ԿԸՀ-ն քվեարկության մեկնարկից ոչ ուշ, քան 2 օր առաջ։
- Փոխանցում է ԿԸՀ-ն քվեարկության մեկնարկից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ։
- Փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության մեկնարկից ոչ ուշ, քան 2 օր առաջ։
- Փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության մեկնարկից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ։ (69.9)

38. Տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները փոխանցելիս՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից քանի օրինակից պետք է կազմվի ընդունման-հանձնման ակտը։
- Երկու օրինակից։ (69.10)
- Երեք օրինակից։
- Չորս օրինակից։
- Հինգ օրինակից։

Գլուխ IX. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը քվեարկության օրը

39. Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկություն անցկացնելիս՝ ժամը քանիսի՞ն է բացվում ընտրատեղամասը.

- Ժամը 06:45-ին։ (78.2.ա)
- Ժամը 07:45-ին։
- Ժամը 08:00-ին։
- Ժամը 07:30-ին։

40. Քվեարկության օրը ընտրատեղամասը բացվել է օրենքով սահմանված ժամին։ Բացելուց հետո պարզվել է, որ հանձնաժողովի անդամների թիվը 9-ից պակաս է։ Այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը վերակազմավորվո՞ւմ է։
- Ժամանակավոր խմբի։
- Հատուկ խմբի։ (67.2)
- Դիտորդական խմբի։
- Աշխատանքային խմբի։

41. Հանձնաժողովի անդամի վիճակահանությամբ որոշված գործառույթը կարող է ժամանակավորապես փոխանցվել հանձնաժողովի մեկ այլ անդամի միայն.
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ։
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի թույլտվությամբ։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ։ (66.9)

42. Ո՞վ է որոշում տեղամասային ընտրական հանձնաժողովի այն անդամին գործառույթներ շնորհելու հարցը, որը հանձնաժողով կներկայանա վիճակահանության ընթացակարգի ավարտից հետո։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (66.7)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը։

43. Դիտարկենք իրավիճակը. ընտրատեղամասում քվեարկության իրականացումը նախատեսվածէ առանց էլեկտրոնային միջոցների կիրառման։ Նշված տեղամասում ընտրությունների օրը, մինչ քվեարկության ընթացակարգի մեկնարկը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի փոխանցել է բոլոր տեսակի քվեաթերթիկների երկու-երկու նոթատետր։ Խախտվե՞լ է արդյոք Ընտրական օրենսգրքի պահանջը։
- Ընտրական օրենսգրքի պահանջը խախտվել է, քանի որ ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի պետք է փոխանցել բոլոր տեսակի քվեաթերթիկների մեկական նոթատետր։ (67.7)
- Ընտրական օրենսգրքի պահանջը չի խախտվել, քանի որ ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի պետք է փոխանցվի բոլոր տեսակի քվեաթերթիկների երկու-երկու նոթատետր։
- Ընտրական օրենսգրքի պահանջը խախտվել է, քանի որ յուրաքանչյուր ընտրողների գրանցում իրականացնողին պետք է փոխանցվի բոլոր տեսակի քվեաթերթիկների երեք-երեք նոթատետր։
- Խախտվել է Ընտրական օրենսգրքի պահանջը, ընտրողներին գրանցում իրականացնողներին չպետք է փոխանցվեն ընտրական քվեաթերթիկի նոթատետրեր, քանի որ ընտրական քվեաթերթիկը ընտրողին պետք է հանձնի հանձնաժողովի նախագահը։

44. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկության անցկացման ժամանակ ո՞վ էստորագրում քվեատուփում զետեղվելիք ստուգողական թերթիկները։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և առաջին ընտրողը։
- Առաջին ընտրողը և տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները։ (67.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը։

- Միայն առաջին ընտրողը։

45. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկություն անցկացնելիս ստուգողականթերթիկը լրացվում է.
- Մեկ օրինակից։
- 2 օրինակից։
- 3 օրինակից։ (67.9)
- 4 օրինակից։

46. Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկություն անցկացնելիս տեղամասային ընտրական հանձնաժողովը լրացնո՞ւմ է արդյոք քվեատուփի մեջ զետեղվելիք ստուգողական թերթիկ։
- Այո, լրացնում է մեկ օրինակից։
- Այո, լրացնում է երկու օրինակից։
- Այո, լրացնում է երեք օրինակից։
- Ոչ, ստուգողական թերթիկ չի լրացվում։ (78.2.գ)

47. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկություն անցկացնելիս ով էպատասխանատու քվեատուփի մեջ զետեղվելիք լրացված ստուգողական թերթիկի երրորդ օրինակը պահելու համար, որը հետագայում օգտագործվում է ստուգողական թերթիկի այլ օրինակի հետ համեմատելու նպատակով։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (67.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։

48. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկություն անցկացնելիս՝ հիմնական և շրջիկքվեատուփերում ստուգողական թերթիկները զետեղվում են.
- Ընտրատեղամասը բացելուն պես։
- Հանձնաժողովի անդամների միջև գործառույթները բաշխելուն պես։
- Քվեարկության օրը ժամը 8-ին։
- Առաջին ընտրողի գալուց հետո։ (67.9)

49. Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկություն անցկացնելիս ո՞վ է պատասխանատուհիմնական քվեատուփը կապարակնքելու համար։
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (80.1.գ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։

50. Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկություն անցկացնելիս քվեատուփերը կապարակնքելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից տպում է.
- Քաղվածք, որը հաստատում է, որ այդ պահի դրությամբ ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով քվեարկել է միայն առաջին ընտրողը։
- Քաղվածք, որը հաստատում է ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ ստուգողական թերթիկի առկայությունը։
- Քաղվածք, որը հաստատում է, որ այյդ պահի դրությամբ ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել։ (80.1.դ)

- Քաղվածք, որը հաստատում է ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամների ներկայության փաստը։

51. Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ քվեարկություն անցկացնելիս գործավարության մատյանում դատարկ քվեատուփերի կապարակնքումը և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից տպված «զրոյական քաղվածքում» տրված տեղեկատվությունը հաստատում են
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը։ (80.1.ե)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և քարտուղարը։
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը։

52. Ո՞վ է ստորագրում ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից տպված նախնական արդյունքների մասին քաղվածքը։
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը։ (78.3)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները։

53. Ո՞ւմ ներկայությամբ է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ակտիվացնում ընտրողների ստուգման սարքը/սարքերը։
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ։ (80.1.ա)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ։
- Միայն դիտորդների ներկայությամբ։
- Միայն լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությամբ։

54. Ո՞ր դատողությունն է ճիշտ. Ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողների ցուցակը.
- Փակցվում է տեսանելի տեղում ցուցադրական արձանագրության հետ։ (80.1.բ)
- Այն չի փակցվում և պահվում է քվեարկության օրվա գործավարության մատյանում։
- Փոխանցվում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց։
- Պահվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի մոտ։

55. Ո՞վ է պարտավոր քվեարկության օրը գրանցել ընտրական բոլոր ընթացակարգերը և դրանց իրականացման ժամանակը նշել գործավարության մատյանում։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝ հանձնաժողովի նախագահի հետ։ (68.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները։

56. Ե՞րբ պետք է բացվի քվեարկության օրվա գործավարության մատյանը։
- Ընտրատեղամասը բացվելուց ոչ ուշ, քան 3 ժամ հետո։
- Ընտրատեղամասը բացվելուց 3 ժամ առաջ։
- Ընտրատեղամասը բացվելուն պես։ (67.4.ա)
- Ընտրատեղամասը բացվելուց ոչ ուշ, քան 2 ժամ հետո։

57. Քվեարկությունն անցկացվում է քվեարկության շենքում ընտրությունների (քվեարկության) օրվա.
- Ժամը 07:00-ից մինչև 20:00-ն։
- Ժամը 08:00-ից մինչև 20:00-ն։ (65.1)

- Ժամը 07:30-ից մինչև 20:00-ն:
- Ժամը 08:30-ից մինչև 20:00-ն:

58. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է ստուգում ընտրողների նշմարումը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը: (66.4. բ.ա)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

59. Ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները համապատասխանում են ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը համարում է միմյանց ոչ համապատասխան: Ստորև թվարկվածներից ո՞ր դատողությունն է ճիշտ:
- Ընտրողների գրանցում իրականացնողը խնդրում է ընտրողին լքել քվեարկության շենքը:
- Ընտրողների գրանցում իրականացնողը իր մոտ նշում է տվյալ փաստը և ընտրողին հատկացնում է քվեաթերթիկ:
- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, ով ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը կատարելուց հետո ընտրողին իրավունք կտա մասնակցելու քվեարկությանը: (71.3)
- Ընտրողների գրանցում իրականացնողը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը կատարելուց հետո խնդրում է ընտրողին լքել տեղամասը, քանի որ ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը:

60. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է իրականացնում ընտրողների նշմարում:
- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (71.2.բ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

61. Ե՞րբ է ընտրատեղամասում կատարվում ընտրողի նշմարում:
- Գրանցման սեղանի մոտ՝ նախքան քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը: (71.2.բ)
- Գրանցումն անցնելուց և քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալուց հետո:
- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնելուց առաջ:
- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնելուց հետո՝ հատուկ ծրար ստանալիս:

62. Ընտրողը, որը հրաժարվել է նշմարում անցնելուց, քվեարկությանը մասնակցելու իրավունք.
- Չունի: (70.3)
- Ունի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:
- Ունի՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:
- Ունի՝ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

63. Այն տեղամասում, որտեղ քվեարկության անցկացումը նախատեսված չէ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, քվեաթերթիկի/քվեաթերթիկների ստացումը ընտրողը հաստատում է ստորագրությամբ.

- Գործավարության մատյանում:
- Գրանցամատյանում:
- Ընտրողների ցուցակում: (69.22)
- Ցուցադրական արձանագրության մեջ:

64. Ո՞ր դատողությունն է ճիշտ: Ընտրատեղամասում, որտեղ նախատեսվում է քվեարկությունն անցկացնել առանց էլեկտրոնային միջոցների կիրառման.

- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները տրամադրելիս նրա/նրանց առջևի էջին համապատասխան սյունակում ստորագրում է և քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ կնիքով վավերացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները տրամադրելիս նրա/նրանց առջևի էջին համապատասխան սյունակում ստորագրում է և քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ կնիքով վավերացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները տրամադրելիս նրա/նրանց առջևի էջին համապատասխան սյունակում ստորագրում է և քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ կնիքով վավերացնում է ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (71.2.բ)
- Քվեաթերթիկը/քվեաթերթիկները տրամադրելիս նրա/նրանց առջևի էջին համապատասխան սյունակում ստորագրում է և քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ կնիքով վավերացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

65. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է ընտրողին հրահանգում ստորագրել ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողների ստուգումը հավաստող կտրոնի վրա:

- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (80.1.է)
- Հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Հանձնաժողովի նախագահը:
- Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը:

66. Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա գաղտնի քվեախցիկ իրեն օգնելու նպատակով ո՞ւմ հրավիրելու իրավունք ունի:

- Այլ ընտրողի: (71.5)
- Դիտորդի:
- Ընտրական հանձնաժողովի անդամի:
- Թույլ չի տրվում գաղտնի քվեարկության խցիկ որևէ մեկին օգնության հրավիրել:

67. Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վնասել է ընտրականքվեաթերթիկը/քվեաթերթիկները, նա պետք է տեղեկացնի.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: (71.6)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցում իրականացնող անդամին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամին:

68. Ո՞ր դատողությունն է ճիշտ:

- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի անկյունը կկտրվի, վրան կգրվի «թերություն ունի», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և այն կպահվի առանձին։
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի անկյունը կկտրվի, վրան կգրվի «վնասված է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և այն կպահվի առանձին։ (71.6)
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի անկյունը կկտրվի, վրան կգրվի «չեղարկվել է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և այն կպահվի առանձին։
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի անկյունը կկտրվի, վրան կգրվի «չօգտագործված է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և այն կպահվի առանձին։

69. Ճի՞շտ է արդյոք դատողությունը։ Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն, մինչ գաղտնի քվեախցիկ մտնելը, ընտրողից պահանջել իրենց ցույց տա, որ նա ձեռքում ունի միայն օրենքով սահմանված քանակի քվեաթերթիկ։
- Այո, ընտրողը պարտավոր է կատարել այս պահանջը։ (71.7)
- Այո, չնայած ընտրողը պարտավոր չէ կատարել այս պահանջը։
- Ոչ, քանի որ դրանով կարող է խախտվել քվեարկության գաղտնիությունը։
- Ոչ, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները դրա իրավունքը չունեն։

70. Հետևյալ դատողություններից ո՞րն է ճիշտ։
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված քվեաթերթիկը կամ այլ կերպ խախտել քվեարկության գաղտնիությունը։ (71.2.դ)
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված քվեաթերթիկը և դրանով խախտել քվեարկության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողն ինքն է հրաժարվում քվեարկության գաղտնիությունից։
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված քվեաթերթիկը և դրանով խախտել քվեարկության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողն ինքն է հրաժարվում քվեարկության գաղտնիությունից, և դա համաձայնեցված է համապատասխան հանձնաժողովի նախագահի հետ։
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը և դրանով իսկ ապահովելու քվեարկության թափանցիկությունը։

71. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը.
- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը, եթե համարում է, որ ընտրողը ոչ ճիշտ է լրացրել քվեաթերթիկը։
- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում։
- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ։
- Իրավունք չունի բացելու լրացված քվեաթերթիկը։ (71.2.դ)

72. Ո՞ր դատողությունն է ճիշտ։
- Քվեարկության ժամանակ քվեատուփին չեն կարող միաժամանակ մոտենալ մեկից ավելի ընտրողներ։ (71.2.ե)
- Քվեարկության ժամանակ քվեատուփին չեն կարող միաժամանակ մոտենալ երկուսից ավելի ընտրողներ։

- Քվեարկության ժամանակ առանց հանձնաժողովի նախագահի թույլտվության քվեատուփին չեն կարող միաժամանակ մոտենալ մեկից ավելի ընտրողներ։
- Քվեարկության ժամանակ առանց հանձնաժողովի նախագահի թույլտվության քվեատուփին չեն կարող միաժամանակ մոտենալ երկուսից ավելի ընտրողներ։

73. Որքա՞ն ժամանակ կարող է ընտրողը ներկա գտնվել քվեարկության շենքում։
- Մուտք գործելուց հետո 5 րոպեի ընթացքում։
- Մուտք գործելուց հետո 7 րոպեի ընթացքում։
- Մուտք գործելուց հետո 10 րոպեի ընթացքում, որը կարող է ավելացվել կամ նվազեցվել անհրաժեշտության դեպքում։
- Քվեարկության համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում։ (65.5)

74. Քվեարկության ընթացակարգերից ո՞րն է առաջին հերթին անցնում ընտրողը։
- Ընտրողի նշմարումը։
- Քվեաթերթիկի ստացումը։
- Ընտրողի նշմարման ստուգումը։ (71.2.ա)
- Ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշումը ընտրողի ներկայացրած փաստաթղթում և ընտրողների ցուցակում։

75. Քվեարկության օրը քվեարկությանը/ընտրություններին մասնակից ընտրողների թվի մասին ժամը 12-ի և ժամը 17-ի տվյալները մուտքագրվում են.
- Ցուցադրական արձանագրության մեջ։ (71.8, 80.ը)
- Բողոքների ռեեստրում։
- Գրանցամատյանում։
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ։

76. Եթե քվեարկության ժամանակ խախտվել է քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը դադարեցնում է քվեարկության գործընթացը և կարգադրությամբ որոշում է կայացնում քվեատուփը նորից կապարակնքելու և քվեարկությունը շարունակելու մասին։ (71.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն իր կարգադրությամբ դադարեցնում է քվեարկության գործընթացը և միայն ԿԸՀ-ի կարգադրության արդյունքում է որոշում կայացնում քվեատուփը նորից կապարակնքելու և քվեարկությունը շարունակելու վերաբերյալ։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը իր կարգադրությամբ դադարեցնում է քվեարկության գործընթացը և միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետևանքով է կայացնում քվեատուփը նորից կապարակնքելու և քվեարկությունը շարունակելու հարցի մասին։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը դադարեցնում է քվեարկության գործընթացը և կարգադրությամբ որոշում է կայացնում քվեատուփը նորից կապարակնքելու և քվեարկությունը շարունակելու հարցի մասին։

77. Քվեարկության ընթացակարգը շրջիկ քվեատուփի միջոցով անցկացվում է.
- Առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը18-ը։
- Առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը18-ը։
- Առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը19-ը։ (72.1)
- Առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան ժամը 20-ը։

78. Ընտրատեղամասում քվեարկությունն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման անցկացնելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի քանի՞ անդամ է մասնակցում շրջիկ քվեատուփի միջոցով ձայն տալու ժամանակ քվեարկության անցկացմանը:

- Ընտրական հանձնաժողովի 1 անդամ:
- Ընտրական հանձնաժողովի 2 անդամ: (72.4)
- Ընտրական հանձնաժողովի 3 անդամ:
- Ընտրական հանձնաժողովի 4 անդամ:

79. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկություն անցկացնելիս.

- Շրջիկ քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներն իրենք են ստորագրում և հատուկ կնիքով վավերացնում քվեաթերթիկը և հատուկ ծրարը:
- Շրջիկ քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներին նախագահի կողմից փոխանցում են հատուկ ծրարներ և ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված անհրաժեշտ քանակությամբ քվեաթերթիկներ:
- Շրջիկ քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներին նախագահի կողմից կփոխանցվեն հատուկ ծրարներ և ընտրողների գրանցում իրականացնողի կողմից ստորագրված և հատուկ կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ քվեաթերթիկներ: (72.3)
- Ոչ մի դատողություն ճիշտ չէ:

80. Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկելիս ավտոմեքենա օգտագործելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- Իրավասու է ավտոմեքենայում տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 վերահսկողների համար:
- Պարտավոր է ավտոմեքենայում տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 վերահսկողների համար: (72.5)
- Իրավասու է ավտոմեքենայում տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 3 վերահսկողների համար:
- Պարտավոր է ավտոմեքենայում տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 3 վերահսկողների համար:

81. Ինչպե՞ս է որոշվում քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության անցկացմանը մասնակցող վերահսկողների ով լինելը:

- Վերահսկողների ով լինելը որոշվում է քվեարկության ժամանակ քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միջև գաղտնի քվեարկությամբ:
- Վերահսկողների ով լինելը որոշվում է քվեարկության ժամանակ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց միջև անվանական քվեարկությամբ:
- Վերահսկողների ով լինելը որոշվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից:
- Վերահսկողների ով լինելը որոշվում է քվեարկության ժամանակ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից իրենց ցանկությամբ: (72.4)

82. Թվարկվածներից ո՞ր դատողությունն է ճիշտ.

- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողի նշմարման ընթացակարգ ընտրողի համաձայնության դեպքում:

- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողի նշմարման ընթացակարգ միայն բացառիկ դեպքերում։
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողի նշմարման ընթացակարգ։ (72.7)
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը չի նախատեսում ընտրողի նշմարման ընթացակարգ։

83. Թվարկվածներից ո՞ր դատողությունն է ճիշտ.
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրվա ժամը 19-ին, իսկ շրջիկ քվեատուփի ճեղքը քվեարկության ավարտին կապարակնքվում է այնպես, որ անհնար լինի այն բացել առանց կապարակնիքը վնասելու։ (72.1; 72.10)
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 19-ին, իսկ շրջիկ քվեատուփը քվեարկության ավարտին այլևս չի կապարակնքվում։
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 18-ին, իսկ շրջիկ քվեատուփը քվեարկության ավարտին կապարակնքվում է այնպես, որ անհնար լինի այն բացել առանց կապարակնիքը վնասելու։
- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 20-ին, իսկ շրջիկ քվեատուփի ճեղքը քվեարկության ավարտին կապարակնքվում է այնպես, որ անհնար լինի այն բացել առանց կապարակնիքը վնասելու։

84. Ընտրական օրենսգրքի համաձայն՝ քվեարկության օրը ժամը քանիսի՞ն պետք է շրջիկ քվեատուփը վերադարձվի ընտրական տեղամաս։
- Ոչ ուշ, քան ժամը 20-ին։ (72.1)
- Ոչ ուշ, քան ժամը 21-ին։
- Ոչ ուշ, քան ժամը 19-ին։
- Ոչ ուշ, քան ժամը 18-ին։

85. Ե՞րբ է տեղամասային ընտրական հանձնաժողովը հայտարարում դժվարամատչելի վայրերում ստեղծված ընտրական տեղամասերում քվեարկության ավարտի մասին։
- Ժամը 20:00-ին, քանի որ բոլոր տեղամասերում քվեարկությունն ավարտվում է միևնույն ժամանակ։
- Մինչև ժամը 20:00-ը ցանկացած ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցել են ընտրողների ցուցակում ընդգրկված բոլոր ընտրողները։ (65.6)
- Մինչև ժամը 20:00-ը ցանկացած ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցել են ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների կեսից ավելին։
- Դժվար հասանելի վայրերում ընտրատեղամասեր ընդհանրապես չեն ստեղծվում։

86. Ի՞նչ որոշում պետք է կայացնի տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ կապված այն ընտրողների հետ, ովքեր չեն հասցրել քվեարկել մինչև քվեարկության շենքը փակելը։
- Ընտրողներին պետք է ազատել տան շենքը՝ առանց քվեարկելու։
- Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը պետք է գրանցի հերթում կանգնած ընտրողների ազգանուններն ու անունները, և միայն նրանց պետք է տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք։ (71.10)
- Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ որոշում կայացնեն հաջորդ օրը քվեարկություն անցկացնելու մասին, որին կմասնակցեն միայն քվեարկության դադարեցման պահին հերթում կանգնած ընտրողները։
- Ընտրողներին հնարավորություն տան ընտրություն կատարել, շարունակել հերթում կանգնել, եթե հաջորդ օրն են ներկայացել ընտրություններին մասնակցելու։

87. Քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ո՞ւմ է հանձնարարում ընտրողների ստուգման սարքից տպել վերջնական հաշվետվությունը։
- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներից որևէ մեկին։ (80.1.թ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին։
- Հոսքը կարգավորողին։

88. Շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները հիմնական քվեատուփի մեջ զետեղելու ընթացակարգն ավարտելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից տպում է.
- Նախնական արդյունքների մասին քաղվածք։ (80.1.ժա)
- Քաղվածք վերջնական արդյունքների մասին։
- Պայմանական արդյունքների մասին քաղվածք։
- Միջանկյալ արդյունքների մասին քաղվածք։

89. Ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային հաշվման սարքից տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից նախնական արդյունքների մասին քաղվածքը տպելուց հետո.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից շարունակվում են ձայների հաշվման և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմման ընթացակարգերը։ (80.1.ժա, 80.1.ժբ)
- Ձայների հաշվման և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը համարվում է ավարտված։
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից շարունակվում են ձայների հաշվման և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմման ընթացակարգերը։
- Ձայների հաշվման և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ընթացակարգերը շարունակվում են ձայների հաշվման կենտրոններում։

90. Քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ քանի՞ հաշվող պետք է ընտրի։
- Առնվազն 3 հաշվող։ (73.1)
- Ոչ ավելի, քան 3 հաշվող։
- Առնվազն 2 հաշվող։
- Ոչ ավելի, քան 2 հաշվող։

91. Ո՞ր դատողությունն է ճիշտ։
- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ ընտրում են ոչ ավելի, քան 3 վերահսկող։
- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ ընտրում են ոչ ավելի, քան 4 վերահսկող։
- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ ընտրում են ոչ ավելի, քան 2 վերահսկող։ (73.1)
- Դիտորդներն իրավունք չունեն քվեաթերթիկների հաշվելու գործընթացը դիտարկելու համար իրենց կազմից ընտրել վերահսկողներ։

92. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ չեն կարողանում ընտրել քվեաթերթիկները հաշվելու գործընթացը վերահսկող դիտորդներ։

- Վերահսկողներին վիճակահանությամբ կորոշի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (73.1)
- Նախագահը որպես վերահսկողներ կընտրի ամենատարեց դիտորդներին։
- Վերահսկողներին անվանական քվեարկության հիման վրա կընտրի տեղամասային ընտրական հանձնաժողովը։
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ։

93. Ո՞ր դատողությունն է ճիշտ։

- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները չեն մասնակցում վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին։
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան մեկ ներկայացուցիչ, որոնք հաշվողների հետ միասին կմասնակցեն վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին։
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ, որոնք հաշվողների հետ միասին կմասնակցեն վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին։ (73.3)
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան 3 ներկայացուցիչ, որոնք հաշվողների հետ միասին կմասնակցեն վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին։

94. Ո՞ր պնդումն է ճիշտ։

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը չօգտագործված քվեաթերթիկների անկյունը կտրում է։ Չօգտագործված և վնասված քվեաթերթիկները փաթեթավորվում են առանձին-առանձին փաթեթներով։ Յուրաքանչյուր փաթեթի վրա նշվում է ընտրատեղամասի անվանումը և համարը, քվեաթերթիկների տեսակը։ (73.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չօգտագործված քվեաթերթիկների անկյունը կտրում է։ Չօգտագործված և վնասված քվեաթերթիկները փաթեթավորվում են մեկ ընդհանուր փաթեթում։ Փաթեթի վրա պետք է նշվի ընտրատեղամասի անվանումը և համարը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունը կտրում է։ Չօգտագործված և վնասված քվեաթերթիկները փաթեթավորվում են մեկ ընդհանուր փաթեթում։ Փաթեթի վրա պետք է նշվի քվեաթերթիկների տեսակը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունը կտրում է։ Չօգտագործված և վնասված քվեաթերթիկները փաթեթավորվում են առանձին-առանձին փաթեթներով։ Յուրաքանչյուր փաթեթի վրա պետք է նշվի ընտրատեղամասի անվանումը և համարը, ինչպես նաև քվեաթերթիկների տեսակը։

95. Ո՞վ է ստորագրում առանձին-առանձին փաթեթներով կապված և կապարակնքված չօգտագործված և վնասված քվեաթերթիկները։

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Հաշվողները և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։ (73.6)
- Միայն հաշվողները։

- Դիտորդները:

96. Հնարավո՞ր է ամփոփել քվեարկության արդյունքները, եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված է:
- Ոչ, եթե պարզվի, որ քվեատուփի կնիքի ամբողջականությունը խախտված է, ապա քվեարկության արդյունքների ամփոփում չի թույլատրվում:
- Ոչ, եթե պարզվի, որ քվեատուփի կնիքի ամբողջականությունը խախտված է, այն պետք է անհապաղ փոխանցել վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Այո, եթե պարզվի, որ քվեատուփի կնիքի ամբողջականությունը խախտված է, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դա օրենքի պահանջների խախտում չի առաջացրել, ապա քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը շարունակվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ: (74.2)
- Այո, քանի որ քվեատուփի կնիքի ամբողջականության խախտումը խոչընդոտող պայման չի հանդիսանում քվեարկության արդյունքներն ամփոփելիս:

97. Ո՞ր դատողությունն է ճիշտ:
- Ընտրատեղամասը փակվելուց հետո սկզբում բացվում է հատուկ քվեատուփը, ապա՝ շրջիկ քվեատուփը:
- Ընտրատեղամասը փակվելուց հետո սկզբում բացվում է շրջիկ քվեատուփը, ապա՝ հիմնական քվեատուփը: (74.4)
- Ընտրատեղամասը փակվելուց հետո սկզբում բացվում է հիմնական քվեատուփը, ապա շրջիկ քվեատուփը:
- Քվեատուփերի բացման հերթականություն սահմանված չէ:

98. Ի՞նչ է պատահում այն դեպքում, եթե շրջիկ քվեատուփում ստուգողական թերթիկ չի գտնվում:
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կփաթեթավորվեն փաթեթով, վրան կգրվի «Անվավեր է» և ընտրական տեղամասում քվեարկության և ձայների հաշվման ընթացակարգերի ավարտից հետո կփոխանցվի վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (74.4)
- Բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեաթերթիկները կփաթաթվեն փաթեթով, վրան կգրվի «Չեղարկված է» և ընտրական տեղամասում քվեարկության և ձայների հաշվման ընթացակարգերի ավարտից հետո կփոխանցվի վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կփաթեթավորվեն փաթեթով, վրան կգրվի «Անվավեր է» և ընտրական տեղամասում քվեարկության և ձայների հաշվման ընթացակարգերի ավարտից հետո կփոխանցվի ԿԸՀ-ին:
- Բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեաթերթիկները կփաթաթվեն փաթեթով, վրան կգրվի «Չեղարկված է» և ընտրական տեղամասում քվեարկության և ձայների հաշվման ընթացակարգերի ավարտից հետո կփոխանցվի ԿԸՀ-ին:

99. Ի՞նչ հետևանք կհաջորդի հիմնական քվեատուփում զետեղված ստուգողական թերթիկի և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից պահված ստուգողական թերթիկի միջև տարբերություն հայտնաբերելուն:
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անհապաղ կփոխանցվի վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (74.5)
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անհապաղ կփոխանցվի ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներին:
- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կոչնչացվեն:

- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անհապաղ կփոխանցվեն ԿԸՀ-ին։

100. Այն ընտրական տեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման, սահմանված նմուշի քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե.
- Այն վավերացված չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կնիքով։
- Այն վավերացված չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ։
- Այն վավերացված չէ ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով։ (75.3.ա)
- Այն վավերացված չէ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեաթերթիկի վրա ստորագրող հանձնաժողովի երկու անդամների ստորագրությամբ։

101. Ընտրատեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման, ստորև թվարկվածներից ո՞րը հիմք չէ քվեաթերթիկն անվավեր համարելու համար։
- Եթե քվեաթերթիկը վավերացված չէ ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով։
- Եթե հատուկ ծրարում հայտնաբերվել է սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ։
- Եթե անհնար է որոշել, թե որ ընտրական սուբյեկտի օգտին է քվեարկել ընտրողը։
- Եթե հատուկ ծրարը սահմանված նմուշի է։ (75.3)

102. Ընտրատեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման, ո՞ր դեպքում է քվեաթերթիկը համարվում անվավեր։
- Եթե հատուկ ծրարում հայտնաբերվել է սահմանված քանակությամբ քվեաթերթիկ։
- Եթե քվեաթերթիկը քվեատուփում զետեղված է սահմանված նմուշի հատուկ ծրարով։
- Եթե քվեաթերթիկը վավերացված է ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով։
- Եթե քվեաթերթիկը նախատեսված է եղել այլ ընտրական տեղամասի համար։ (75.3.զ)

103. Ընտրատեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման, ձայների հաշվման գործընթացում կասկածելի համարվող քվեաթերթիկների իսկության հարցը որոշում է.
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ։
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ։ (75.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։

104. Ընտրական տեղամասերում, որտեղ ընտրություններն անցկացվում են էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, սահմանված նմուշի քվեաթերթիկը անվավեր չի համարվում, եթե.
- Գունավորված է և/կամ նշված է մեկից ավելի ընտրական սուբյեկտների անվան դիմաց առկա համապատասխան շրջանակը։
- Չի գունավորված և/կամ նշված չէ ոչ մի ընտրական սուբյեկտի անվան դիմաց առկա համապատասխան շրջանակը։
- Գունավորված է և/կամ նշված է միայն մեկ ընտրական սուբյեկտի անվան դիմաց համապատասխան շրջանակը։ (78.4)
- Բոլոր պատասխանները ճիշտ են։

105. Առանց էլեկտրոնային միջոցների կիրառման քվեարկություն անցկացնելու դեպքում ո՞ր պնդումն է ճիշտ։

- Յուրաքանչյուր 10 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղական կապիչով, և յուրաքանչյուր կապոցի վրա՝ ինչպես լրիվ, այնպես էլ ոչ լրիվ, նշվում է կապված քվեաթերթիկների քանակը: (75.9)
- Յուրաքանչյուր 20 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղական կապիչով, և յուրաքանչյուր կապոցի վրա՝ ինչպես լրիվ, այնպես էլ ոչ լրիվ, նշվում է կապված քվեաթերթիկների քանակը:
- Յուրաքանչյուր 15 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղական կապիչով, և յուրաքանչյուր կապոցի վրա՝ ինչպես լրիվ, այնպես էլ ոչ լրիվ, նշվում է կապված քվեաթերթիկների քանակը:
- Յուրաքանչյուր 5 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղական կապիչով, և յուրաքանչյուր կապոցի վրա՝ ինչպես լրիվ, այնպես էլ ոչ լրիվ, նշվում է կապված քվեաթերթիկների քանակը:

106. Ո՞ր ընտրական տեղամասի քվեաթերթիկները են ենթակա թվային ձևաչափի փոխադրման:
- Այն ընտրական տեղամասի քվեաթերթիկները, որտեղ տեղադրված չի լինի քվեաթերթիկների էլեկտրոնային հաշվման սարք: (81.1)
- Այն ընտրական տեղամասի քվեաթերթիկները, որտեղ տեղադրված կլինի քվեաթերթիկների էլեկտրոնային հաշվման սարք:
- Բոլոր ընտրական տեղամասերի քվեաթերթիկները՝ անկախ նրանից ընտրական քվեաթերթիկների էլեկտրոնային հաշվման սարք տեղադրված է, թե ոչ:
- Ոչ մի ընտրական տեղամասի քվեաթերթիկները ենթակա չեն թվային ձևաչափի փոխադրման:

Գլուխ X. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը

107. Որտե՞ղ պետք է արտացոլվեն քվեարկության և ընտրությունների արդյունքները:
- Միայն ԿԸՀ-ի քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- Միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- ԿԸՀ-ի, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում: (82.1)

108. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը.
- Իրավական ակտ չէ:
- Տեղեկատվական փաստաթուղթ է, որն իրավաբանական ուժ չունի:
- Անհատական վարչաիրավական ակտ է: (82.2)
- Ընտրված պատգամավորի լիազորությունները հաստատող իրավական ակտ է:

109. Ո՞վ է պատասխանատու տեղամասային ընտրական հանձնաժողովում ամփոփիչ արձանագրությունները պահպանելու և դրանք ըստ նշանակման տրամադրելու համար:
- Ընտրական հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողները:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը: (82.9)
- Ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված անձը:

110. Ո՞վ է լրացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ: (83.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:

111. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը: (83.7)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի առնվազն հինգ անդամ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի առնվազն յոթ անդամ:

112. Ո՞ր դատողությունն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, իսկ եթե համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա իրավունք ունի արձանագրությանը կցել իր տարբերվող կարծիքը: (83.4; 83.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, իսկ եթե համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա պետք է ինքը կազմի տարբերվող արձանագրություն:
- Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա իրավունք ունի չստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա պարտավոր է չստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

113. Ո՞ւմ պատասխանատվությանն է հանգեցնում ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների ուղղումը:

- Միայն ընտրական հանձնաժողովի նախագահի:
- Ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի:
- Ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի: (82.3)
- Հանձնաժողովի ամբողջ կազմի:

114. Ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների ուղղում.

- Արգելված չէ:
- Կարելի է անել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:
- Կարելի է անել տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ:
- Արգելվում է: (82.3)

115. Եթե ամփոփիչ արձանագրությունը լրացնելու ժամանակ սխալ է թույլ տրվել, ապա ընտրական հանձնաժողովը.

- Պետք է կազմի ուղղման արձանագրություն։ (82.4)
- Պետք է պատրաստի ամփոփիչ արձանագրության երկրորդ օրինակ։
- Պետք է ուղղի տվյալը ամփոփիչ արձանագրության մեջ։
- Պետք է կազմի բացատրական արձանագրություն։

116. Ո՞ր դատողությունն է ճիշտ։
- Ուղղման արձանագրությունը ստորագրելուց կարող է ձեռնպահ մնալ հանձնաժողովի այն անդամը, որը համաձայն չէ ուղղման արձանագրությանը։
- Ուղղման արձանագրությունը ստորագրելուց կարող է ձեռնպահ մնալ հանձնաժողովի այն անդամը, որը կասկածում է ընտրական հանձնաժողովի գործողության օրինականությանը։
- Ուղղման արձանագրությունը ստորագրելու պարտավորություն ունեն հանձնաժողովի նիստին ներկա գտնվող հանձնաժողովի բոլոր անդամները։ (82.4)
- Ուղղման արձանագրությունը ստորագրելու պարտավորություն օրենքով չի նախատեսված։

117. Ո՞ր պնդումն է ճիշտ։
- Ամփոփիչ արձանագրությունը տպվում է պաշտպանական նշաններ ունեցող թղթի վրա, որը պատվիրելու և ձեռք բերելու իրավունք ունի միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը։ (82.11)
- Ամփոփիչ արձանագրությունը տպվում է պաշտպանական նշաններ ունեցող թղթի վրա, որը պատվիրելու և ձեռք բերելու իրավունք ունի միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը։
- Ամփոփիչ արձանագրությունը տպվում է պաշտպանական նշաններ ունեցող թղթի վրա, որը պատվիրելու և ձեռք բերելու իրավունք ունի միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը։
- Ամփոփիչ արձանագրությունը տպվում է պաշտպանական նշաններ ունեցող թղթի վրա, որը պատվիրելու և ձեռք բերելու իրավունք ունի միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը։

118. Ո՞րն է ճիշտ դատողությունը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է ապահովել, որ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը փակցվի հանրային ծանոթացման համար։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել, որ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը փակցվի հանրային ծանոթացման համար։ (83.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել, որ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը փակցվի հանրային ծանոթացման համար։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է ապահովել, որ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը փակցվի հանրային ծանոթացման համար։

119. Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը պետք է վավերացվի.
- Նոտարական կարգով։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով։ (83.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով։

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

120. Քվեարկության բոլոր ընթացակարգերի ավարտից հետո ո՞վ է ստորագրում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը:
- ԿԸՀ նախագահը և տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և տեղամասային հանձնաժողովի քարտուղարը: (83.13)
- ԿԸՀ-ի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահները:

121. Նրանից հետո, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը կզոմսակնքվի առանձին փաթեթով, ո՞վ է ստորագրում փաթեթը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և հանձնաժողովի այլ անդամներ: (83.14)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը:
- Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները:

Գլուխ XI. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք և նրանց լիազորությունները

122. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեն.
- ԿԸՀ-ի, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները:
- ԿԸՀ-ի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները:
- Համապատասխան ընտրական հանձնաժողովում գրանցված մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (4.5)

123. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք չունի.
- Համապատասխան հանձնաժողովում հավատարմագրված ԶԼՄ ներկայացուցիչը:
- Համապատասխան հանձնաժողովում գրանցված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչը:
- Ընտրություններին մասնակցող թեկնածուն: (4.5)
- Դիտորդը:

124. Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների միևնույն կազմակերպությունը քվեարկության օրը քանի՞ ներկայացուցիչ կարող է միաժամանակ ունենալ ընտրատեղամասում:
- Ոչ ավելի, քան չորս:
- Ոչ ավելի, քան երկու: (48.6)
- Ոչ ավելի, քան երեք:
- Ոչ ավելի, քան մեկ:

125. Միևնույն տեղական դիտորդական կազմակերպությունն իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան.
- Մեկ դիտորդ: (44.3)
- Երկու դիտորդ:

- Չորս դիտորդ։
- Հինգ դիտորդ։

126. Քանի՞ միջազգային դիտորդների միջոցով է իրականացնում միջազգային կազմակերպությունը ընտրությունների դիտարկումը մեկ ընտրական տեղամասում։
- Ոչ ավելի, քան երեք միջազգային դիտորդների միջոցով։
- Ոչ ավելի, քան հինգ միջազգային դիտորդների միջոցով։
- Ոչ ավելի, քան տասը միջազգային դիտորդների միջոցով։
- Ոչ ավելի, քան երկու միջազգային դիտորդների միջոցով։ (44.6)

127. Ո՞վ պետք է ընտրատեղամասում կրի ինքնությունը և կարգավիճակը նշող կրծքանշան։
- Միայն ընտրական հանձնաժողովի անդամը։
- Միայն դիտորդները։
- Միայն ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը։
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք։ (64.3)

128. Ինչի՞ իրավունք չունի դիտորդը.
- Ազդեցություն գործել ընտրողների ազատ կամարտահայտության վրա։
- Ընտրողներին քարոզչություն իրականացնել որևէ ընտրական սուբյեկտի օգտին։
- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանիշ ու նշան։
- Բոլոր պատասխանները ճիշտ են։ (46.2)

129. Թվարկվածներից ինչի՞ իրավունք ունի դիտորդը.
- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանիշ։
- Քվեարկության օրը գտնվել քվեարկության շենքում՝ առանց կրծքանշանի։
- Քվեարկության օրը ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացնող կազմակերպության գրանցված ներկայացուցչին։ (46.1.գ)
- Կոչ անել ընտրողին աջակցել որևէ ընտրական սուբյեկտի։

130. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք ունե՞ն արդյոք առանց առդիոմոնիթորինգ իրականացնելու լուսանկարահանման և տեսանկարահանման իրավունք քվեարկության շենքում։
- Այո, նրանք իրավունք ունեն առանց առդիոմոնիթորինգ իրականացնելու լուսանկարահանել և տեսանկարահանել ինչպես քվեարկության խցիկում, այնպես էլ դրանից դուրս։
- Ոչ, ընտրական օրենսգրքով ոչ ոք իրավունք չունի քվեարկության շենքում իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում առանց առդիոմոնիթորինգի։
- Այո, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, բացառությամբ քվեախցիկի, կարող են առանց առդիոմոնիտորինգ իրականացնելու իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում քվեարկության շենքում։ (4.6)
- Ոչ, միայն ԿԸՀ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն ունեն իրավունք քվեարկության շենքում իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում առանց առդիոմոնիթորինգի։

131. Ո՞ր դատողությունն է ճիշտ։
- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելված չէ։
- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելված չէ այն դեպքում, եթե գործողությունն իրականացնում է կուսակցության կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը։

- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելվում է: (50.11)
- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելված չէ այն դեպքում, եթե գործողությունն իրականացնում է կուսակցության կողմից նշանակված ներկայացուցիչը:

Գլուխ XII. Քվեարկության օրը կարգուկանոնի պահպանումը քվեարկության շենքում և դրան հարակից տարածքում

132. Ո՞վ է պատասխանատու քվեարկության օրը քվեարկության շենքում կարգուկանոնի պահպանման համար:
- Պարեկային ծառայության աշխատակիցները:
- Մանդատայինները:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (64.1)
- ԿԸՀ-ն:

133. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու և կարգը խախտելու դեպքում խախտողին հանձնաժողովի շենքից վտարելու մասին որոշումն ընդունում է՝
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը միանձնյա:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը: (64.5)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

134. Ո՞ր որոշումը չի կարող կայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Քվեարկությունը դադարեցնելու որոշումը հաստատելու մասին:
- Ընտրատեղամասը ժամանակավոր փակելու մասին որոշումը հաստատելու մասին:
- Քվեարկության շենքը ժամանակավոր փակելու հետ կապված հանձնաժողովի նախագահի որոշումը չեղարկելու մասին:
- Ընտրությունները հաջորդ օր տեղափոխելու մասին: (65.4)

135. Ո՞վ է կայացնում որոշում քվեարկության շենքը ժամանակավոր փակվելուց հետո քվեարկության շենքը բացելու և քվեարկությունը շարունակելու մասին:
- Միանձնյա կայացնում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ձայների մեծամասնությամբ կայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ձայների մեծամասնությամբ կայացնում է ԿԸՀ-ն:
- Միանձնյա կայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (65.4)

136. Եթե քվեարկությունը հայտարարվել է դադարեցված.
- Այն այլևս չի վերսկսվի: (65.4)
- Այն կվերսկսվի նույն տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:
- Այն կվերսկսվի նույն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշմամբ:
- Այն կվերսկսվի վերադաս ընտրական հանձնաժողովի նախագահի որոշմամբ:

Գլուխ XIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավասությունը քվեարկության օրը դիմումների/բողոքների քննարկման վերաբերյալ

137. Ո՞վ իրավունք ունի ընտրական ընթացակարգի վերաբերյալ արտահայտված դիտողությունը, պահանջը և բողոքը գրանցել քվեարկության օրվա գործավարության մատյանում:

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և տեղակալը:
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քարտուղարը:
- Միայն ընտրողները:
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք: (68.9)

138. Որտե՞ղ են արտացոլվում ընտրական տեղամասում քվեարկության գործընթացի և քվեարկության ընթացքի վերաբերյալ պահանջները, բողոքները և դիտողությունները:

- Ընտրությունների ամփոփիչ արձանագրության մեջ:
- Քվեարկության օրվա գործավարության մատյանում: (68.1)
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ:
- Հատուկ արձանագրության մեջ:

139. Դիտորդներից որոշված վերահսկողներն իրավունք ունեն դիտարկելուու հաշվման ողջ ընթացակարգը, մատնանշելու սխալը, պահանջելու, որ սխալը շտկվի: Պահանջը չկատարելու դեպքում վերահսկողներն իրավունք ունեն բողոքարկել տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունը.

- ԿԸՀ:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: (75.2)
- Անմիջապես դատարան:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կամ անմիջապես դատարան:

140. Ե՞րբ է ընտրատեղամասում կազմվելու քվեարկության ընթացակարգի խախտման վերաբերյալ դիմումը/բողոքը:

- Օրենքի խախտում նկատելուն պես՝ քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև ամփոփիչ արձանագրություն կազմելը:
- Օրենքի խախտում նկատելուն պես՝ քվեարկության օրվա ժամը 8-ից մինչև քվեատուփի բացումը:
- Օրենքի խախտումը նկատելուն պես՝ քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև քվեատուփի բացումը: (90.1)
- Օրենքի խախտումը նկատելուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

141. Տեղամասային ընտրական հանձնաժողովը/տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է պատշաճ կերպով արձագանքել ձայների հաշվման և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի ժամանակ թույլ տրված խախտումների վերաբերյալ դիմումին/բողոքին:

- Քվեարկության օրվանից 1 օրվա ընթացքում:
- Քվեարկության օրվանից 2 օրվա ընթացքում:
- Անհապաղ: (90.3)
- Խախտում թույլ տալուց հետո 12 ժամվա ընթացքում:

142. Դիմումը/բողոքը տեղամասային ընտրական հանձնաժողով ներկայացված է համարվում.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում գրանցվելու պահից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովում գրանցվելու պահից: (92.9)

- Դիմում/բողոք կազմելու պահից։
- Դիմումի/բողոքի համապատասխան մակագրումից հետո։

Գլուխ XIV. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի/ղեկավարի պատասխանատվության միջոցառումները

143. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի նկատմամբ կարգապահական խախտումներ կատարելու համար կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցը.
- Նկատողություն։
- Զգուշացում։
- Պաշտոնեական վճարի/ պաշտոնեական վճարի մի մասի պահում։
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (12.2)

144. Ո՞վ է վարչական պատասխանատվության ենթարկվելու քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունում ներառված տվյալների ուղղման պատճառով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմը։
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և/կամ քարտուղարը։ (103)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և/կամ քարտուղարը։
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների ուղղումը չի հանգեցնում վարչական պատասխանատվության։

145. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները/հանձնաժողովի ղեկավար անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել.
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին գործավարության մատյանում գրառում կատարելիս խանգարելու պատճառով։
- Տեղական/միջազգային դիտորդի, ընտրական սուբյեկտի և լրատվամիջոցների ներկայացուցիչների Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների սահմանափակման կամ նրանց գործունեությանը խանգարելու պատճառով։
- Նախընտրական քարոզչությանը Ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ մասնակցելու պատճառով։
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (95; 106; 107)